ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

13 օգոստոսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնավան համայնք, հասցե՝ գ.Լեռնավան
հեռ .(0255)6-29-69

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում Լեռնավան համայնքի ղեկավարի N 42, 43 որոշումները

Առդիր 2 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

« 06 » հուլիսի 2014թ. N 42

# ՈՐՈՇՈՒՄ

## *ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-042-0047-0005 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ , ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈւ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով ,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով , ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի , շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքով, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 16.04.1991թ. թիվ 2 որոշմամբ , ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29- ի թիվ 2387-Ն որոշմամբ ,*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

*1.Օրենքի ուժով 06-042-0047-0005 ծածկագրի տակ գտնվող 0.21411 հա փաստացի օգտագործվող հողամսի նկատմամբ ճանաչել Մկրտիչ Սանասարի Մարտիրոսյանի /ծնվ. 1938թ./, Սանասար Մկրտիչի Մարտիրոսյանի /ծնվ.1968թ./ , Լուսյա Արշակի Մարտիրոսյանի /ծնվ 1919թ./, Կարինե Մկրտիչի Մարտիրոսյան /ծնվ. 1966թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը :*

*2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:*

*3.Վերականգնել և ճանաչել 0.21411հա բնակելի տան-204,02 կառուցման,ինքնակամ կառույցի -5,29 և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջող շահերը չխախտող , առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1989 թվականաին կառուցված բնակելի տան ինքնակամ կառույցի -5,29 քմ Մկրտիչ Սանասարի Մարտիրոսյանի ,Սանասար Մկրտիչի Մարտիրոսյանի , Լուսյա Արշակի Մարտիրոսյանի , Կարինե Մկրտիչի Մարտիրոսյան ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը :*

*4.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:*

*5. Արշարժ գույքին տրամադրել փոստային հասցե ՝ Լեռնավան համայնք 18 փողոց , 16 բնակելի տուն:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«12 » հուլիսի 2014թ. N 43

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀՐԱՆՏ ՎԱՂԻՆԱԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՔԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ԱՐՇԱԿ ՀՐԱՆՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ՎԱՉԻԿ ՀՐԱՆՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ԽԱՉԻԿ ՀՐԱՆՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ » ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հաշվի առնելով Հրանտ Հովսեփյանի դիմումը Լեռնավան համայնքի տարածքում համատեղ սեփականության իրավունքով իր ընտանիքին Գայանե Հովսեփյան, Արշակ Հովսեփյան, Վաչիկ Հովսեփյան, Խաչիկ Հովսեփյան սեփականության իրավունքով պատկանող 0018-0006 ծածկագրով 0.1021 հա տնամերձ հողամասի հողօգտագործման իրավունքը ձևակերպելու մասին `ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման և 2002թ. դեկտեմբերի 26-ի «Ինքնակամ կառուցված շենքերի և ինքնակամ զբաղեցված հողամսների իրավական կարգավիճակի մասին» ՀՕ-510-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով և քանի որ նշված տնամերձ հողամասը 16.04.1991թ. Լեռնավանի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի թիվ 2 որոշումով սեփականաշնորհվել է Վոլոդյա Մազմանյանի ընտանիքին , ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով,*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

*1.Վերականգնել Հրանտ Հովսեփյանի, Գայանե Հովսեփյան, Արշակ Հովսեփյան, Վաչիկ Հովսեփյան, Խաչիկ Հովսեփյան համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0018-0006 ծածկագրով 0.1021 հա տնամերձ հողամսի հողհատկացման հիմքերը, համաձայն հատակագծի և հաշվի առնելով , որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողերի կազմում, ճանաչել Հրանտ Հովսեփյանի, Գայանե Հովսեփյան, Արշակ Հովսեփյան, Վաչիկ Հովսեփյան, Խաչիկ Հովսեփյան համատեղ սեփականության իրավունքը 0018-0006 ծածկագրով 0.1021 հա տնամերձ հողամասի նկատմամբ , հողամասին տրամադրել գ. Լեռնավան 3փ. տնամերձ հող 9 հասցեն:*

*2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանում:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ